

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱԳՐԱՎ. ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ*

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարան) հրատարակութամբ լույս է տեսել պրոֆ. Աշ. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» ուսումնասիրությունը, որը պարունակում է հայ-ռուսական հարաբերությունների և Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությանը վերաբերող ուշագրավ փաստեր:

Աշխատության առաջարանում հեղինակը իրավամբ գրում է.

«Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունը սկիզբ է առել խորը անցյալում և սերտ համագործակցության հողի վրա կոփվել ու ամրացել է տասնյակ դարերի ընթացքում: Անդրկովկասի բախտակից երեք ժողովուրդները՝ ադրբեջանցիները, հայերը և վրացիները՝ դարեր շարունակ միատեղ են պայքարել ազատության և անկախության համար, միասին են աշխատել ու ստեղծագործել և միասին ճաշակել իրենց վիճակված և՛ դառնու-թյունը, և՛ ուրախությունը» (էջ 5):

Դննություն ենթակա աշխատությունը մի փորձ է ծածկելու այն բացը, որ գոյություն ունի անդրկովկասյան բախտակից երեք ժողովուրդների պատմության մի շրջանի՝ XVIII դարի առաջին քառորդի, ուսումնասիրությունը բնագավառում: Հեղինակի նպատակը հիմնականում եղել է հրատարակել նոր նյութեր, «կապված զխափորապես Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների փոխհարաբերությունների, ինչպես նաև նրանց ձգտումների հետ՝ ազատագրվելու պարսկա-թյուրքական լծից ուս ժողովրդի օգնությամբ» (էջ 10):

Պրոֆ. Աբրահամյանը հասել է իր նպատակին, օգտագործելով արխիվային բազմաթիվ, մինչև այժմ չհրատարակված, փաստաթղթեր:

Աշխատությունը բաղկացած է առաջարանից, 9 գլուխներից, վավերագրերի բաժնից, օտարամուտ և զավառական բառերի բառարանից և հատուկ անունների ցանկից: Համառոտակի ծանոթանանք աշխատության բովանդակության հետ:

Աշխատության առաջին՝ «Անդրկովկասը 18-րդ դարի առաջին քառորդում» գլխում (էջ 13—22) շատ համառոտ տրված է անդրկովկասյան եղբայրական երեք ժողովուրդների վիճակը Սեֆևյան իրանի և Օսմանյան թյուրքիայի իշխանության ներքո:

Երկրորդ գլխում, որը ունի «Իվան-Կարապետի ուղևորությունը դեպի Ղարաբաղ» վերնագիրը (էջ 23—32) ցույց է տրված Պյոտր I-ի դեսպան իվան Կարապետի ուղևորության ընթացքը, թե վերջինս ինչպիսի դժվարություններով և ճանապարհներով հասել է Ղարաբաղ:

«Ղարաբաղցիների ուսաց հպատակությունը ընդունելը և պատվիրակի ջանքերը՝ համախմբելու հայ ֆեոդալներին ընդդեմ թյուրքական ագրեսիայի» (3-րդ, էջ 33—48) գլխում հեղինակը մի շարք փաստաթղթերով ցույց է տվել, որ «հայ ֆեոդալներին միավորողն՝ առաջին հերթին, թյուրքական ագրեսիաների վտանգն էր» (էջ 44): Այստեղ հեղինակը հանգում է երկու ճիշտ եզրակացության՝ ա) Հայաստանում, վրաստանում և Ադրբեջանում ծավալված ազատագրական շարժումներն իրարից անջատված չեն եղել, այլ սերտորեն կապված են եղել իրար հետ» (էջ 46) և բ) Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումները սերտորեն կապված են եղել Ռուսաստանից սպասվող օգնության հետ» (էջ 47):

4-րդ՝ «Արևելյան Հայաստանի կողմնորոշումը դեպի Ռուսաստան» գլխում (էջ 49—60) հեղինակը փաստաթղթերով ցույց է տալիս, որ «Արևելյան Հայաստանի բնակչությունը և հիմնականում ունեցել է որոշակի ուսական՝ «հյուսիսային օրինակապետ» (էջ 60):

* Պրոֆ. Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:

«Հարարերությունները Վրաստանի հետ» (5-րդ, էջ 61—76) գլխում հեղինակն անդրադարձել է վրացական և հայկական ղեկավար շրջաններում գոյություն ունեցող ռազմա-քաղաքական դաշինքին:

Հաջորդ գլխում՝ «Իվան Կարապետը և Դավիթ բեկի գլխավորած աղատագրական շարժումը Սյունիքում» (էջ 77—95) հեղինակը խոսում է Դավիթ բեկի գլխավորած շարժման մասին՝ կապված Իվան Կարապետի գործունեության հետ:

Այստեղ նա անդրադառնում է Դավիթ բեկի անձնավորությանը վերաբերող մի քանի հարցերի՝ ծննդավայրի, աղղատոհմի:

VII, «Հայ-Ադրբեջանական փոխօգնության պայմանագիրը» գլխում (էջ 96—109) հեղինակը անդրադառնում է Ղարաբաղի հայերի և Դանձակի ադրբեջանցիների միջև ընդդեմ թյուրքական ագրեսիայի կնքված փոխօգնության պայմանագրին և այն դերին, որ այդ գործում խաղացել է Մահմադ զուլի խանը:

Վերջին երկու գլուխներում՝ «Նոր իրադրություն Սյունիքում» (էջ 110—115), «Սյունիքի պայքարը թյուրք հարստահարիչների դեմ 1725—1726 թվականներին» (էջ 116—139) հեղինակը նշում է միջադպիսի իրադրության մեջ Ռուսաստանի համար ստեղծված այն նոր պայմանները, որոնք առաջ բերին անդլո-ֆրանսիական կառավարող շրջանները, և որոնք կաշկանդեցին Ռուսաստանին անդրկովկասյան ժողովուրդներին խոստացած օգնությունը իրականացնելիս: Այնուհետև հեղինակը խոսում է թյուրք ագրեսորների դեմ հայերի մղած (1725—1726) հերոսական պայքարի մասին:

Համառոտակերպ են այս է քննության ենթակա աշխատության բովանդակությունը: Պրոֆ. Աշ. Արրահամյանի աշխատության արժեքը առավել ևս բարձրանում է նրանով, որ վերջում բերված են աշխատության մեջ օգտագործված արխիվային 79 փաստաթղթերի բնագրերը:

Առաջարկվող ուսումնասիրության մեջ կարմիր թելի նման անցնում են հայ, վրացի և ադրբեջանական ժողովուրդների համատեղ պայքարի զրկագները օտար նվաճողների դեմ, զրկագներ, որոնք վկայում են, որ 18-րդ դարի առաջին տասնամյակներում Հայաստանում ծավալված աղատագրական պայքարը մեկուսացված չի եղել վրաց և ադրբեջանական ժողովուրդների պայքարից, որ բախտակից երեք ժողովուրդներին աղատագրական հերոսական պայքարում նրանց օգնությունը ցույց է տվել Ռուսաստանը, որ ուսական կողմնորոշում ունեցել են ոչ միայն Ղարաբաղի հայերը, վրացիները, այլև ադրբեջանցիները, Արևելյան Հայաստանի բնակչությունը:

Այս հարցերի լուսարանումը կատարված է արխիվային նոր նյութերի հիման վրա: Աշխատություն մեջ առաջ քաշված հարցերը հիմնականում բացահայտված են 4, 5, 7-րդ գլուխներում: Մասնավորապես 5-րդ գլխում նոր վավերագրերի հետ միասին օգտագործված են հայտնի, բայց նոր բացատրություն ստացած, նյութեր: Այս գլխում կան բանասիրական գիպուկ և իրավացի դիտողություններ: Պարզարանված են մի շարք փաստաթղթերի ու հասցեագրված լինելը:

Բերենք բանասիրական նման կարևոր ճշտումներից մի քանիսը:

Այսպես, ահադ. Բրոսսեն «Переписки, на иностранных языках, грузинских царей с российскими государями» (Պետերբուրգ, 1861) աշխատության մեջ Կախեթիայի թագավոր Կոստանդին II-ի (նույն ինքը՝ Մահմադ զուլի խան) 1724 թ. մի նամակը հրատարակել է հետևյալ վերնագրով՝ «Грамота Константина, кахетинского царя к полководцу Петра Великого» (էջ 164—165): Այդ պատճառով էլ, ինչպես ճիշտ նշում է պրոֆ. Արրահամյանը, «... կովկասագետներից ոչ ոք չի կարծել, որ այդ դրությունն ուղղված է ոչ թե Պետրոսի ինչ որ դորահրամանատարին, այլ նրա պատվիրակ Իվան Կարապետին» (էջ 65, հմտ. նաև էջ 74):

Ահադ. Բրոսսենի վերոհիշյալ հրատարակության մեջ վրացական թագավոր Վախտանգ VI-ի 1724 թ. մի նամակը, ըստ հրատարակչի իր բնույթով է եղել գեներալ-լեյտենանտ Մատյուշկինին և վերնագրվել «Грамота царя Вахтанга к генерал-лейтенанту Матюшкину», սակայն պրոֆ. Արրահամյանը համոզեցուցիչ կերպով ցույց է տալիս, որ այդ նամակը ուղղված է եղել ոչ թե գեներալ-լեյտենանտ Մատյուշկինին, այլ Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետին (էջ 68—69):

Նման ճշտումներ տևս Շահնավազ խանի մի համակի կապակցությամբ, ուղղված ոչ թե Կախեթիայի բնակիչներին, այլ Ղարաբաղի մեկիքներին (էջ 72) և այլն:

Այս Արարահամյանի աշխատությունն ամբողջությամբ վերցրած օգտակար և հետաքրքիր գործ է, սակայն ունի որոշ թերություններ, որոնց նշումը օգտակար կարող է լինել առհասարակ այդ հարցերով զրադիոդներին համար:

Մեր կարծիքով աշխատության մեջ անբավարար է խոսվում «սեփական»՝ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ճնշման և շահագործման մասին: Մասնավորապես հայ եկեղեցու, հոգևորականության մասին բառացի ոչ մի խոսք չենք գտնում: Հայտնի են, օրինակ, էջմիածնի հողային տիրապետությունները, պանդան հարկերի և «նվերների» անվան տակ հավաքվող տուրքերը 17—18-րդ դարերում:

Այս հարցին վերաբերող հարուստ նյութեր կան Մատենադարանի և այլ արխիվներում. կան տոհմաբանականություններ¹, նման փաստեր ժամանակակիցները գրի են առել նաև Մատենադարանի մի շարք ձեռագրերի դատարկ էջերում: Վատ չէր լինի, եթե հեղինակը, որին, անշուշտ, ծանոթ էլ լինեն նման նյութեր, օգտագործեր դրանք իր աշխատության մեջ:

Աշխատությունն ունի ազդեցության տեղական սխալներ, որոնց վրա ցանկանում ենք մի քիչ ավելի հանդամանորեն կանգ առնել: Հեղինակը, թվելով Դավիթ բեկի պատմության իրեն հայտնի հինգ ձեռագիր ընդօրինակությունները, ի միջի այլոց հիշում է՝ ... բ) Արսեն եպիսկոպոս Ղլտշյանի նկարագրած ձեռագիրը (տես «Նյութեր Դավիթ բեկի մասին» խորագրով նրա հոդվածը, տպված «Արարատ» ամսագրում, 1905, էջ 382—387), ... Ե) Եսայի սարկավադի ձեռագիրը 1847թ. ընդօրինակությամբ, որի նախադադարն է հանդիսացել 1759 թվականին Ամստերդամում ընդօրինակված մի ձեռագիր, որը (Ամստերդամինը՝) զբաղեցված է Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի №3297-ի տակ» (էջ 78): Բանն այն է, որ Ա. Ղլտշյանի նկարագրած ձեռագիրը նույն Եսայի սարկավադի ընդօրինակած (№ 3297) ձեռագիրն է, որոնք հեղինակը հիշում է որպես տարբեր ազդեցություններ:

Ի դեպ նշենք, որ վերևում նշված № 3297 ձեռագիրը ընդօրինակվել է հովակիմ Ռաֆայելյան ինքնուրույն կողմից 1759 թ. Ամստերդամում արտագրած ձեռագրից: Վերջինս գտնվում է Լենինգրադի Արևելագիտական ինստիտուտի հայ ձեռագրերի ֆոնդում և նշված է B—129-ի տակ:

Այս ձեռագիրը, որը ունի բանասիրական հետաքրքիր շեղումներ, վրիպել է ինչպես պրոֆ. Արարահամյանի, այնպես էլ ուրիշների ուշադրությունից:

Աշխատության VI՝ «Ի վան կարապետը և Դավիթ բեկի զխավորած ազատագրական շարժումը Սյունիքում» գլուխը (77—95) անհաջող է շարադրված, փաստական նյութի ոչ ճիշտ օգտագործման հետևանքով:

Այս գլխի երկրորդ մասը՝ 91—95 էջերը նվիրված են բացառապես Դավիթ բեկի անձնավորության հետ կապված որոշ հարցերի պարզաբանմանը՝ ծննդավայրի, ազգատոհմի և այլն: Այս հարցերը առավել ընդարձակ շոշափվել են հեղինակի հոդվածում, որը լույս է տեսել 1951 թվականին⁴, դրա համար էլ, հեղինակը աշխատության մեջ այդ հարցերին անդրադարձել է թեթևակի՝ «...հակիրճ ձևով», ինչպես գրում է նա, սակայն հստակապես՝ չենք նա կանգ է առել նշված հարցերի վրա և օգտագործել Մատենադարանի Արխիվային բաժնի (կաթողիկոսական ֆոնդ, թղթ. 6, վավերագիր 45) մի վաստաթուղթ, որը հավաստի աղբյուր չէ, ինչպես կտեսնենք ստորև:

Ինչպես հայտնի է Դավիթ բեկի պատմությունը հրատարակվել է մեկ անգամ (1871 թ., Վաղարշապատ) Ա. Գուլամիրյանցի կողմից: Այստեղ Դավիթ բեկի մասին ասված է, «... և կոչեալ զԴավիթ-բէգն Սյունեցի ի Հայկազանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն եր-

¹ Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, II. Պողոսյան, Եկեղեցական հոգատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դարերում և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր, Երևան, 1940:

² Տես № 2748, էջ 359ա և ուրիշները:

³ Պրոֆ. Արարահամյանն անուշադրության է մատնել նաև Դավիթ բեկի անձնավորության և նրա վարած կռիվներին վերաբերող ժողովրդական բանահյուսության այն նյութերը, որոնք հրատարակել է Գ. Շիրմազանյանցը («Արարատ», 1877, էջ 410—419, 447—457):

⁴ Ա. Արարահամյան, Նոր վավերագրեր Դավիթ բեկի ու նրա զխավորած ազատագրական շարժման մասին (Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8, էջ 61—73):

թալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Քափան...» (էջ 5, ընդգծումը մերն է — Վ. Հ.):

Սակայն Դավիթ բեկի պատմության մեղ հասած բոլոր ձեռագրերն այլ բան են ասում Դավիթ բեկի ծննդավայրի մասին: Բերենք նույն հատվածը ըստ ձեռագրերի «... և կոչեալ զԴաւիթ-պէկն Մծիխթացի ի Հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Քափան...» (4598 էջ 3 ա, նույնությամբ տես Ձ 6835, էջ 3 ա, B—129 (Հենինդրադ), էջ 4, Չամչյան, Պատմութիւն հայոց, հատոր Դ., էջ 785, քանի որ Ձ 3267 ձեռագիրը, որը սկզբից թերի է, բայց ընդօրինակվել է B—129 ձեռագրից, ուրեմն սա էլ պետք է նույն հատվածը, ունենար):

Ինչպես տեսնում ենք ձեռագրական տվյալները միարեւրան ասում են, որ հրատարակության ընթացքի «Սիւնեցի» անվան փոխարեն պետք է լինի «Մցիխթացի», իսկ «յիւր հայրենի» բառերը ձեռագրերում բացակայում են:

Այս տարբերությունը պետք է բացատրել միմիայն հրատարակչի՝ Ա. Դյուլամիրյանցի կողմից հրատարակվող ընթերցի մեջ կատարած կեղծումով: Այս բանը առաջին անգամ ահազանգել է Ա. Ղլտչյանը շուրջ 50 տարի առաջ¹:

Ա. Ղլտչյանը հիմնավոր փաստերով ցույց է տվել, որ Դյուլամիրյանցը պարզապես կեղծել է ձեռագրի մի այլ հատվածը հրատարակության ընթացքում, «ազգասիրական» նկատառումով:

Ի դեպ տեղին է նշել, որ մի այլ «ազգասիր», Ձ 6835 ձեռագրում, ջնջելու փորձ կատարելով, ձեռագրական վերոհիշյալ վկայության վերջին՝ «եւ էառ զնեւրումն ի փափէն Հոսմայ» հատվածի վրա թանաքով զուշուրթյամբ գիծ է քաշել:

Հետևապես ճիշտ չի վարվում պրոֆ. Արրահամյանը, երբ Դավիթ բեկի ծննդավայրի մասին խոսելիս գրում է. «Դավիթ-բեկի պատմիչը իր հերոսին Սյունեցի է համարում»: Իրականում մեր հերոսին Սյունեցի է համարում ոչ թե պատմիչը, այլ Դավիթ բեկի պատմության հրատարակիչը: Ամենայն հավանականությամբ պրոֆ. Արրահամյանը, որը ձեռագրական տվյալները կարողանում է շատ լավ արժեքավորել, ձեռագրական նշված վկայությունները խորը կերպով քննության կենթարկելով իր աշխատության մեջ, եթե նրան նախօրոք չզայթակեցներ Մատենադարանի արխիվային բաժնի վավերագրերից մեկը, որի մասին ցանկանում ենք խոսել:

Մատենադարանի արխիվի կաթողիկոսական գիմնազիի № 6 թղթապանակի № 45 վավերագիրը մեկ թերթի վրա գրված Գրիգորիոսյան Մադիստրատի կողմից տրված տեղեկանքի պատճեն է, 1797 թ. նոյեմբերի 15-ի ամսաթվով: Տեղեկանքը Պավել Ա կայսրին հաստատելու էր փոխգնդապետ Ստ. Դավիդովի ազնվական ծագումը: Այդ վավերագրի սկզբի տողերից իմանում ենք, որ Ստ. Դավիդովի մասին Մադիստրատը իր ձեռքի տակ ոչ մի վավերագիր չի ունեցել և տեղեկանքին հիմք է հանդիսացել իր՝ Ստ. Դավիդովի ասածները և նեկայացված թղթերը: Այդ երևում է փաստաթղթի հետևյալ վկայություններից «Բարձրագոյն հրամանաւ կայսերն ամենայն Լուստաաց Պավել Պետրովիչին յատուկ ուկազով պահանջեցին մերս մադիստրատէ յայտնել որքան ազնիւ զոյն ի քաղաքոջս Գրիգորիւսոյ, վասն որոյ ի զննելն եցոյց. մեզ վերոգրեալ պատգովովն զօրինակ ազգաբանութեան տոհմի իւրոյ»: Եվ էլի «Դարձեալ եցոյց մեզ ալ. բուզը»: Այս առումով չափազանց հետաքրքիր է նաև նոտարի արձանագրությունը նույն վավերագրի ներքևի մասում. «Աւագ քահանայ տէր Յօհաննէս Յենկիպարիչ Ատիպէկե[ա]նց, որ եմ նարդենիս նօտար հայոց մադիստրատին Գրիգորիւսոյու մինչ ընթերցայ զտեքստի պարոն պատգովովն ի ազգաբանութիւնն՝ համառօտ գրեցի աստ, վասնորոյ ստորագրեցի և կնքեցի ի հաստատութիւն վերոյ գրեցելոցս» (ընդգծումը մերն է — Վ. Հ.):

18—19-րդ դդ. Ռուսաստանում, ազնվական ծագում ունենալը քաղաքական և զինվորական ասպարեկում առաջ գնալու լավագույն միջոց էր: Մարդիկ դանազան միջոցներով կորզում էին իրենց ազնվական ծագումը հաստատող թղթի մի կտոր և ապահովվում ընդմիջտ: Մատենադարանի արխիվի կաթողիկոսական գիմնազիում գտնում ենք այդպիսի բազմաթիվ տեղեկանքներ: Որոնց «Իսկոթ թյունը» հաստատում է կաթողիկոսը: Հետաքրքիրն այն է, որ տվյալ հայցվորի պահանջը բավարարելիս այդ տեղեկանքներում ազգաբանությունը սովորաբար սկսում են Հայկ նահապետի սերնդից և սուտ ու սխալ տեղեկություններով այն հասցնում մինչև իրենց ժամանակները, ապա սկսում իսկական ազգաբանությունը:

¹ «Արարատ», 1905, էջ 382—384:

Օրինակ նման փաստաթղթերից է Մատենադարանի արխիվի կաթողիկոսական դիվանի № 45 թղթապանակի 92 վավերագիրը, որի վերջում որպեսզի ոչ մի կասկածի տեղիք չտրվի, ավելացված է «Ջախոսիկ այսպէս ստուգելով արժանանցաւ ի մերոց հին և նոր մատենագրաց և ի յատուկ յիշատակարանաց եղելոց ի գրասան սրբոյ արքունոյս և վկայեմք վասն զուս նամատեսութեան» (ընդգծումը մերն է—Վ. Հ.):

Այն հարցը, թե արդյոք Ատ. Դավիթովը Դավիթ բեկի հարազատներից է՝ նոր միտք չէ։ Սուրբ 60 տարի է այն դոյութիւնն ունի։ Բայց ամբողջ հարցը նրանում է, որ այդ վավերագրում բերված փաստերը չեն համապատասխանում պատմական իրականության և է՛ի ավելորդ անգամ հաստատում են վավերագրի կեղծ լինելը։ Պրոֆ. Արրահամյանը վավերագրում հիշված Աթաբեկին համարում է «Դավիթ բեկի նախահայրերից մեկը» (էջ 92), այնուհետև եզրակացնում, որ Դավիթ բեկը Գեղարքունիցի է։ Նախ մենք չդիտենք իսկապես Աթաբեկը Դավիթ բեկի նախահայրերից է, որովհետև ոչ մի վկայություն չունենք այդ մասին, իսկ վավերագրում ոչինչ չի ասված Աթաբեկի և զորավար Դավիթ բեկի ազգակցական կապի մասին, և ասլա, եթե նույնիսկ Աթաբեկը պատմական անձնավորություն լինի էլ, համեմայն դեպս դրանով Դավիթ բեկը չի լինի Գեղարքունիցի։ Մեզ հասած փաստերը բոլորովին այլ բան են ասում։

Մեզ հետաքրքրող վավերագրերից երեւում է, որ Աթաբեկը մանր և աննշան իշխան չի եղել, այլ բավական հզոր, որովհետև նա տիրել է «Հնդեսին նահանգացն հզոր բազկաւ» և նա մահանալիս իր եղբորորդուն կտակով հանձնել է «սեփական Մմակ կոչեցեալ նահանգաւն հայրենի դիւղօրէիւք ծովակաւ ձկնալի դետօրէիւք և այլովք ամենիւք»¹։

Բնական է կարծել, որ նման անձնավորությունն անհետք չէր կորչի և կհիշվեր վիճադիր արձանագրութիւնների կամ հիշատակարանների մեջ իր և իր հարազատների կողմից։ Բարեբախտաբար մեզ է հասել 1513 թվականի, այսինքն ճիշտ Աթաբեկ ժամանակաշրջանի, մի վավերագիր, ուր հիշված են Գեղարքունիի այդ ժամանակվա իշխանների անունները։ Մենք նկատի ունենք Մատենադարանի № 1488 ձեռագիրը², այստեղ պահվել է 1513 թվականի մի ուխտագիր, որի վերջում թվարկված են Գեղարքունիի իշխանները և տանուտերները, որտեղ բացակայում է Աթաբեկի անունը։ Սակայն այս վավերագիրն այդ առումով բացառություն չէ։ Այդ են հաստատում վերևում նշված և դրան մոտակա ժամանակների վիճադիր արձանագրութիւնները։ 16-րդ դարի առաջին կեսից վիճադիր մի շարք արձանագրութիւններ են մնացել վերոհիշյալ փաստաթղթում հիշվող Փիրհամզեից, նրա մերձավորներից, ուր հիշվում է Փիրհամզեի անունը, բայց ոչ մի արձանագրության մեջ չենք հանդիպում Աթաբեկի անվանը։ Այս հանգամանքը կարելի է պատահականություն համարել, իհարկե, ոչ։

Այսպիսով, պրոֆ. Արրահամյանը դյուրահավատություն է հանդես բերել երբ վերևում նշված վավերագիրն առանց մանրադնին ուսումնասիրության, համարել է ստույգ և օգտագործել։

Այժմ մի քանի խոսք աշխատության այլ կարգի թերությունների մասին։

Գրքի 57—58-րդ էջերում հեղինակը, խոսելով 1724 թ. ապրիլ—մայիս ամիսներին թյուրքերի դեմ լուսինների մղած հերոսամարտի մասին, գրում է. «Իժբախտաբար, ոչ մի տեղեկություն չի պահել հայկական մատենագրութիւնը և ոչ էլ այն արժանացել է պատմաբաններից որևէ մեկի ուշադրությանը» (էջ 57), մինչդեռ այստեղ բերված նյութերի

¹ Տե՛ս, Кучук-Иоаннисов, Армянская надпись в г. Григолополе, Москва, 1896, стр. 13.

² «Տեղեկագիր» վերոհիշյալ իր հոդվածում (1951) № 8, էջ 70—81, Աթաբեկի եղբորորդուն՝ Դավիթ բեկին հեղինակը համարում է զորավար Դավիթ բեկի պապը։

³ Մատենադարանի արխիվ, կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 6, վավերագիր № 45 (տես քննությունն ենթակա աշխատության № 64 վավերագիրը, էջ 237)։

⁴ Նույն տեղում։

⁵ Էջ 4ա և բ, նույնը տե՛ս և Յ. Շահխաթունեանց «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւոռացն Արարատայ», հատ. 2-րդ, էջմիածին, 1842, էջ 257—258, Մ. Սրմբատեանց «Տեղեկագիր Գեղարքունի», էջ 581—582։

⁶ Յ. Շահխաթունեանց, «Ստորագրութիւն...» հատոր 2-րդ, էջ 241, հմմտ. Մ. Սրմբատեանց, «Տեղեկագիր Գեղարքունի», էջ 494—495, 499, 608։

զղալի մասը նորահայտ չեն, ինչպես շարունակ նշում է պրոֆ. Արրահամյանը, այլ դրանց մասին ուրիշներն էլ գիտեն. օրինակ, բնկ. Ռ. Արրահամյանը իր «Разгром закавказскими народами турецких агрессоров в Гандже в 1723 г.» հոդվածում (Հայկական ՍՍՌ «Տեղեկագիր», 1953, № 6, էջ 47—59), օգտագործել է պրոֆ. Արրահամյանի աշխատության «Վավերագրեր» բաժնում տեղ գտած № 34 փաստաթուղթը։ Պրոֆ. Արրահամյանի այս աշխատությունում չկա որևէ հիշատակություն վերահիշյալ հոդվածի մասին։ Իսկ բնկ. Պ. Հարությունյանը տակավին 1951 թ. լույս տեսած իր «Борьба армян и азербайджанцев за присоединение к России» (տե՛ս «Ученые записки Института Востоковедения», т. III, Москва, 1951, стр. 108—138) հոդվածում պրոֆ. Արրահամյանի այժմ հրատարակած բաղմաթիվ փաստաթղթերից, օրինակ՝ № 1, 17, 18, 39 և էլի ուրիշները օգտագործել է։

Աշխատության 16—17-րդ էջերում բերված է Պետրոս սարկավադի հիշատակարանին կցված փոքրիկ ժամանակագրությունից ընդարձակ հատված, որտեղ երկիցս զործածված է «միմեզ» բառը։ Վերջինս բացակայում է աշխատության վերջում բերված օտար բառերի բացատրանում¹։ Մականյան ձեռագրի բնագրում շատ պարզ ու հստակ գրված է «միմեզ», իսկ սա արաբերեն «մյումեյեիզ» բառն է և նշանակում է «քննիչ», որը անցել է թյուրքերենին և հայերենում էլ զործածվել է «միմեզ» ձևով։

Մեր ձեռքի տակ չունենք աշխատությանը կցված վավերագրերի իսկական բնագրերը, բայց երբ համեմատում ենք մեջբերումները, վերջում բերված վավերագրերի պատճենների հետ, բաղմաթիվ տեղերում նկատում ենք շեղումներ և անճշտություններ։ Օրինակ, 106-րդ էջում խոսելով հայ-ադրբեջանական փոխօգնության պայմանագրի մասին, հեղինակը հայտնում է, որ այդ պայմանագիրը մեջ է բերելու ամբողջությամբ, բայց այն ամբողջությամբ չի բերվում։ Թվում է թե «Վավերագրեր» բաժնում փաստաթղթերի պատճենները պետք է լրիվ բերվեն, համենայն դեպս ավելի ամբողջական, քան մեջբերումներում եղածը, բայց այդպես չի արված։ Նույն վավերագրից բերված ցիցատում կան հատվածներ՝ («մինըդմինոյ հետ սէր մօհրաթ առնենք»), «և թէ լակդոյ», «կամ լադդի դայ», «կամ դանջեցոց մին մարդի, կամ շատ փոքր բռնենք, կամ սպանենք, կամ թալանենք»), որոնք «Վավերագրեր» բաժնում (էջ 198) պակասում են։ Ստացվում է այն, որ այդ շատ կարևոր փաստաթուղթը օգտագործված և ապա հրապարակված է թերի, թեև հեղինակը ոչ մի տեղ չի նախազգուշացնում բնագրերից որևէ կրճատում անելու մասին։ Ավելին՝ փոքրիկ առաջարկում (էջ 142) հեղինակները գրում են «վավերագրերը մենք տալիս ենք առանց փոփոխության»։ 68-րդ էջում գրված է՝ «... հայէվար դրէք, մեզ հասցրէք, ոնց որ դուք էդտեղ էք՝ տեսնենք...», իսկ «Վավերագրեր» բաժնում նույն հատվածը բերված է այսպես՝ «հայէվար դրէք, մեզ հասցնէք ոնց որ դուք էդտեղ լ՛գել էք՝ տեսնենք...» (էջ 173), ինչպես տեսնում ենք ընդգծված բառը 68-րդ էջի մեջբերման մեջ բացակայում է։ Ըվ ապա 20-րդ էջում «... շուտով հասիք, պարքըն մին հաւ արէք... Այստեղ մարդի աբելսլէր գերի ան անում...» «Վավերագրեր» բաժնում գրված է՝ «... շուտով հասիք պլաբրն մին հաւ արէք... Այստեղ մարդի աբելսլէր գերի ան անում...» (էջ 235)։ Նման շեղումներ և անճշտություններ տես նաև 126 և 261, 127 և 258, 129 և 223 (ծածկագրերի վերծանման մեջ) և ուրիշ էջերում։

Սրանք են աշխատության մեջ նկատված փոքրիկ թերությունները, որոնք ըստ էության չեն նսեմացնում գրքի ընդհանուր արժեքը։ Աշխատությունը զղալի ներդրում է 18-րդ դարի անդրկովկասյան ժողովուրդների հերոսական պայքարի պատմության ուսումնասիրության զործում։

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

¹ Ի դեպ կան նման ուրիշ բառեր էլ, որոնք տեղ չեն գտել բացատրանում, օրինակ՝ «թօվլայ» (էջ 42) — «զում» և այլն։